

«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ

Հաստիքի անվանումը՝ Թարգմանիչ Նամակագրության և լոգիստիկայի բաժնում

Աշխատանքային պայմանները՝ անորոշ ժամկետով (3 ամիս փորձաշրջան)

Աշխատավայրը՝ Զվարթնոց օդանավակայան

Սոցիալական երաշխիքներ՝ անվճար ծառայողական տրանսպորտ, բժշկական ապահովագրություն, այդ թվում՝ ընտանիքի անդամների

Աշխատանքի նկարագիրը՝ Կազմակերպել Ընկերության նամակների ստացումը և առաքումը, Կատարել Ընկերության գործունեությունն ապահովող անհրաժեշտ փաստաթղթերի թարգմանություններ

Հիմնական գործառույթները և պարտականությունները

- Կատարել ավիացիայի բնագավառին վերաբերող բազմաբնույթ փաստաթղթերի, պայմանագրերի, կանոնակարգերի, օրենքների, իրավական ակտերի, կառավարության որոշումների, ֆինանսական հաշվետվությունների, շինարարական նախագծերի, նամակների և այլ նյութերի անգլերեն-հայերեն-ռուսերեն թարգմանություններ՝ պահպանելով տերմինների և սահմանումների բառային և իմաստաբանական ճշգրիտ նշանակությունը:
- Ապահովել թարգմանությունների ժամանակին և որակյալ կատարումը և դրանց ուղարկումը համապատասխան բաժիններ:
- Կազմակերպել Ընկերության նամակների ստացումը և առաքումը, այդ թվում՝ «Արագ փոստ» ծառայության միջոցով:
- Կոորդինացնել Նամակագրության և լոգիստիկայի բաժնին առնչվող լոգիստիկ աշխատանքները (ապահովագրական պայմանագրերի ժամկետների նկատմամբ հետևողականություն, ծառայության վարորդների աշխատանքի կոորդինացում, Ընկերության բջջային հեռախոսահամարների կորպորատիվ փաթեթի վարում, և այլն):
- Ժամանակին և ճշգրիտ կատարել անմիջական ղեկավարի (ղեկավարության)՝ ծառայությանն առնչվող հանձնարարականները:
- Իրականացնել պաշտոնից բխող այլ գործառույթներ:

Ներկայացվող պահանջները

- Բարձրագույն կրթություն՝ օտար լեզուների (անգլերեն) կամ թարգմանչական գործ բնագավառում
- Առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
- Հայերեն, անգլերեն, ռուսերեն գրավոր և բանավոր հաղորդակցման գերազանց հմտություններ
- Համակարգչային գրագիտություն
- Ժամանակի կառավարման ունակություն
- Խնդիրներ լուծելու և ինքնուրույն որոշումներ կայացնելու հմտություններ
- Թիմում աշխատելու կարողություն
- Գործավարական բնագավառում աշխատանքային փորձը կղիտվի որպես առավելություն:

Դիմելու կարգը՝ Բոլոր հետաքրքրված թեկնածուները, ովքեր համապատասխանում են վերոնշյալ հաստիքի պահանջներին, կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hrselection@aia-zvartnots.aero էլ. հասցեին՝ “Subject” դաշտում պարտադիր նշելով «Թարգմանիչ» :